

**Արձանագրություն № 6 (321)**  
**ԵՊՀ-ի ուս. բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2020 թ-ի փետրվարի 5-ի նիստի**

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:  
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 18-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

**Օրակարգ.**

1. 2019-2020 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:
2. ԵՊՀ-ի անվանական կրթաթոշակների հարցը:
3. Մոսկվայի կառավարության կրթաթոշակների հարցը:
4. Թեմայի և դեկավարի հաստատման հարցը:
5. Գիտական Խորհրդի կազմում փոփոխությունների մասին:
6. Մագիստրոսական կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքների մասին:
7. Ընթացիկ հարցեր:

**1. ԼՍԵՑԻՆ` 2019-2020 ուս.տարվա ձմեռային քննաշրջանի արդյունքների մասին:**

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ`** Ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Ավարտվել է ձմեռային քննաշրջանը, արջևում` փետրվարի 6-14, առաջին լուծարքային շրջանն է: Լուծարքը անցկացվում է հանձնաժողովի ներկայությամբ` դեկան կամ տեղակալ, ամբիոնի վարիչ և դասախոս:

Ֆակուլտետի 160 ուսանողներից 16-ը ունեն անբավարար գնահատականներ: Դա 10 տոկոս է կազմում: Մտահոգիչ է իրավիճակը 3-րդ կուրսի մեկ ուսանողի մոտ, ով պարտքեր ունի բազմաթիվ առարկաներից:

Մագիստրատուրայի 1 ուսանող ունի 1 անբավարար գնահատական:

Խնդրում ենք ուշադիր լինել ամփոփագրերը լրացնելիս, ունեցել ենք խնդիրներ:

Բացակայությունների դեմ տարվող հսկողությունը շարունակվելու է:

**ՈՐՈՇԵՑԻՆ`** Տեղեկությունը ընդունել ի գիտություն:

**2. ԼՍԵՑԻՆ` 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ`** Դեկան Պ.Բալայանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ`** Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը` որպես անվանական կրթաթոշակի թեկնածուներ` առաջադրել հետևյալ անձանց.

**Կոյան Սոնա** (/ռուսաց լեզու և գրականություն/ 3-րդ կուրսի ուսանող) **Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ**.

**Հովհաննիսյան Լիլի** (/ռուսաց լեզու և գրականություն/ 3-րդ կուրսի ուսանող) **Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ**:

**3. ԼՍԵՑԻՆ՝ Մոսկվայի կառավարության կրթաթոշակների հարցը:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** Դեկան Պ.Բալայանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես Մոսկվայի կառավարության կրթաթոշակի թեկնածուներ՝ առաջադրել հետևյալ անձանց.

**Աղաբաբյան Լեոնուհի** - (/ռուսաց լեզու և գրականություն/ 4-րդ կուրսի ուսանող)

**Այվազյան Նարինե** – (/լեզվաբանություն և ՄՄՆ/ 4-րդ կուրսի ուսանող)

**4. ԼՍԵՑԻՆ՝ Վանաձորի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի հայցորդ Ազնեսա Արամայիսի Հարությունյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:**

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** 1. Հաստատել Վանաձորի պետական համալսարանի ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի հայցորդ Ազնեսա Արամայիսի Հարությունյանի ատենախոսության հետևյալ թեման՝ «Прагматические аспекты изучения (на материале названий продуктов питания)» - "Ժամանակակից ռուսերենի գործանունները. ուսումնասիրության լեզվամշակութաբանական և ճանաչողական հայեցակետերը (սննդամթերքի անվանումների հիման վրա)", որը համապատասխանում է Ժ. 02.04 "Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)" մասնագիտությանը:

2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆեսոր Լիլիթ Գեորգի Բրուսյանին:

**5. ԼՍԵՑԻՆ՝ Գիտական խորհրդի կազմում փոփոխությունների մասին:**

**ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝** ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար Մ. Դպիրյանը: Գիտական խորհրդի կազմից հեռացած Անգելինա Սարգսյանի փոխարեն գիտական խորհրդի անդամ է առաջադրվում Անահիտ Երվանդյանը – ՈՒԳԸ նախագահ:

**6. ԼՍԵՑԻՆ՝ Մագիստրոսական կրթական ծրագրի մշտադիտարկման արդյունքների մասին:**

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՛ ռուս գրականության ամբիոնի վարիչ Լ. Հակոբյանը:

**«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ և ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՄՓՈՓՈՒՄ**

1. «Ռուսաց լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագիրը հաստատվել է 2016 թվականի հոկտեմբերի 14-ին:

Նախորդ տարիներին մոնիթորինգ չի անցկացվել, սակայն ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ միջոտ կատարվել են: Մասնավորապես սա վերաբերում է ուսումնական տարվա վերջի ամփոփումների ժամանակ անցկացվող քննարկումներին, որտեղ՝ ի թիվս այլոց դիտարկվում են նաև այս կամ այն առարկայի արդյունավետությունը մագիստրոսական ծրագրի համատեքստում:

2. Ըստ ուսանողական հարցումների, մագիստրոսական ծրագիրն ապահովող երկու ամբիոնների՝ ռուս գրականության և ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնների միջին գնահատականը կազմում է 4.58: Հարցումներին կից տրված մեկնաբանություններում ուսանողները հիմնականում բարձր են գնահատել մագիստրոսական ծրագիրն ու այն իրականացնող պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատանքը՝ մասնավորապես նշելով դասավանդողների բարձր արհեստավարժությունը, մարդկային որակները, մասնագիտական հմտությունները և օբյեկտիվությունը՝ քննությունների ընթացքում: Սրա հետ մեկտեղ ուսանողների մի մասը դժգոհություն է հայտնել որոշ դասախոսների կողմից մատուցված դասընթացների որակից և գնահատման ձևերից:

3. Շրջանավարտների բավարարվածության հարցումների արդյունքները ներկայացված են որակի ապահովման կենտրոնի նախաձեռնությամբ վերջերս անցկացված քննարկման ամփոփագրում:

Քննարկման ընթացքում շրջանավարտները չեն անդրադարձել կրթական ծրագրի պրոֆիլին և համապատասխանությանը մասնագիտական աշխատաշուկայի արդի պահանջներին, հիմնականում ծանրանալով դասավանդման որակին և մեթոդներին, ինչպես նաև գիտելիքների գնահատմանը:

Հարցմանը մասնակցած շրջանավարտները որպես առավելություն հատկապես նշել են դասախոսների բարձր պրոֆեսիոնալիզմը, նրանց գերակշռող մասի ձգտումը հիմնարար գիտելիք տալու ուսանողին, պատրաստակամությունը ուսանողի հետ շփվելու դասերի կամ մագիստրոսական աշխատանքի առնչությամբ: Շեշտվել է նաև դասախոսների օբյեկտիվ մոտեցումը ուսանողների գիտելիքի գնահատման ժամանակ: Որպես կրթական ծրագրի թերություններ ուսանողները նշել են մի քանի տարաբնույթ գործոն, որոնց մի մասի հետ կարելի է համաձայնել /օրինակ՝ «դասավանդման հնացած մեթոդները», սակայն մյուսները տարակուսելի են /օրինակ, ի՞նչ է նշանակում «հնացած առարկաների դասավանդումը»/:

4. Մագիստրոսական ծրագիրը հեղինակած երկու ամբիոնների մասնագետները ջանացել են ստեղծել համապարփակ առարկաների համակարգ, որտեղ ներկայացված լինեն ժամանակակից ռուս բանասիրության հիմնական միտումները: Այսուհանդերձ, ծրագրի իրականացման ընթացքում ժամանակ առ ժամանակ անհրաժեշտություն է

ծագում որոշակի փոփոխություններ կատարելու թե՛ ներառարկայական թեմաներում, թե՛ առարկաների ցանկում: Ֆոկուս խմբի հարցման ժամանակ ուսանողները նշել են մի քանի առարկա, որոնց ուսումնառությունը կնպաստեր իրենց մասնագիտական կայացմանը, սակայն որոնք չեն անցել, կամ չեն անցել բավարար չափով: Դրանք են «Թարգմանչական գործ», «Մանկավարժություն» «Գեղարվեստական տեքստի վերլուծություն» և «Լեզվաբանական փորձաքննություն» առարկաները: Եթե վերջին առարկան խնդրահարույց է, քանի որ այն առանձին բազմապրոֆիլային գիտություն է, ապա առաջինները մտածելու տեղիք են տալիս: Արդարացի է նաև ուսանողների դիտողությունը «Գիտական աշխատանքի նախապատրաստման մեթոդաբանություն» առարկան բակալավրիատի համակարգում զետեղելու մասին:

5. Ռուս բանասիրության ֆակուլտետը սերտորեն համագործակցում է բոլոր այն ֆակուլտետների և ամբիոնների հետ, որոնց առարկաների դասավանդումը նախատեսված է մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանով: Բացի այդ, ծրագրը համագործակցում է այլ բուհերի՝ Երեվանի վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական գիտական համալսարանի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և Հայ-Ռուսական համալսարանի համապատասխան ֆակուլտետների և ամբիոնների հետ:

6. Մագիստրոսական ծրագրի բարելավման նպատակով նախորդ երկու տարիներին որոշ փոփոխություններ են կատարվել: Այսպես՝ «Մլավոնագիտության և ռուսաց լեզվի պատմության արդի հիմնախնդիրներ» առարկան փոխարինվել է «Ռուս լեզվաբանության արդի հիմնախնդիրներ» առարկայով, իսկ «Ժանր և գրական ուղղություն» առարկան փոխարինվել է «Ռուս գրականությունը եվրոպականի համատեքստում» առարկայով:

7. «Ռուսաց լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագիրը պահանջարկ ունի, քանի որ ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել բազում և տարբեր բնագավառներում, մասնավորապես՝ մանկավարժության, գիտահետազոտական աշխատանքի, ժուրնալիստիկայի, հրատարակչական աշխատանքի բնագավառներում, տուրիստական գործակալություններում և տարբեր տեսակի միջազգային կազմակերպություններում, որտեղ պանջվում է ռուսերենի լավ իմացություն: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ասպիրանտուրայում: Ինչ վերաբերում է դասավանդման և ուսումնառության աջակցման միջոցներին, ապա հիմնական անհրաժեշտ պայմանները /լսարաններ, համակարգիչներ և այլն/ առկա են:

8. Կրթական ծրագրի SWOT աղյուսակի ամփոփումը.

Ծրագրի **ուժեղ կողմերը** ներկայացնելիս հիմնվել ենք 2016/17 – 2018/19 ուս. տարիների ԵՊՀ Super Vision ծրագրում ներկայացված ուսանողների կարծիքների, ինչպես նաև կից ներկայացված ֆոկուս խմբի հարցման ամփոփագրի վրա: Լավագույն փորձի զարգացման և տարածման նպատակով անհրաժեշտ ենք համարում կազմակերպել ամբիոնային և ֆակուլտետային սեմինար պարապմունքներ՝ փորձի փոխանակման նպատակով:

**Թույլ կողմերի** մասին տեղեկությունները նույնպես քաղել ենք վերը նշված աղբյուրներից: Ըստ ուսանողների կարծիքի, ծրագրի թույլ կողմերը հետևյալն են.

ա.Դասախոսական կազմում երիտասարդ կադրերի պակասը, բ.Դասավանդման ավանդական ձևերի գերակշռումը, գ.Մի խումբ դասընթացներ քիչ են իրարից տարբերվում, դ. Դասընթացներում գործնական բաղադրիչի պակասը:

Թույլ կողմերի շտկման նպատակով հարկ ենք համարում. ա.Հնարավորության դեպքում համալրել դասախոսական կազմը երիտասարդ մասնագետներով, բ.Որտեղ հնարավոր է՝ կիրառել դասավանդման ակտիվ և ինտերակտիվ ձևերը, գ.Հստակեցնել դասընթացների նյութը և համապատասխանեցնել մասնագրերում հայտարարված թեմաների հետ, դ. Դասընթացներում ավելացնել գործնական բաղադրիչը:

Ծրագիրը կարող է ընդլայնել իր գործունեության **հնարավորությունները՝** ա. կազմակերպելով ռուսերենի դասընթացներ՝ լրացուցիչ կրթության շրջանակներում, բ. ընդլայնելով ֆակուլտետի միջազգային գիտական կապերը և ներգրավելով մագիստրոսներին ամբիոնների գիտական ծրագրերի մեջ:

Ծրագրի իրականացմանը սպառնացող **վտանգները** մի քանիսն են. ա.Ֆինանսական գործոնը և ուսանողների մի ստվար մասի անվճարողունակությունը, բ. Գործնականում հստակեցված չէ մագիստրոսական կրթության առավելությունները բակալավրիատի հանդեպ և որպես արդյունք՝ մոտիվացիոն գործոնի անկման միտումը, գ. Գործատուների անտարբերությունը մագիստրոսական կրթությամբ մասնագետներ ունենալու վերաբերյալ:

Սակայն այս խնդիրների լուծումը մագիստրոսական ծրագրի իրավասությունից դուրս է:

9. Ծրագրի որակի բարելավումն անմիջականորեն կապված է դասախոսների որակի բարձրացման հետ: Այդ խնդիրներով զբաղվում է ԵՊՀ Հետբուհական կրթության վարչությունը, որի կազմակերպած դասընթացներին ակտիվորեն մասնակցում են ֆակուլտետի դասախոսները: Բացի այդ, ֆակուլտետը հնարավորություն ունի կազմակերպելու միջոցառումներ՝ միտված ծրագրի որակի բարելավմանը, մասնավորապես՝ ա.Թեմատիկ սեմինարների անցկացում, բ.Ուսանողների մասնակցությունը ամբիոնների գիտական աշխատանքներում: Այս խնդիրների լուծման համար պատասխանատու են մագիստրոսական ծրագիրն իրականացնող երկու ամբիոնների վարիչներ Լ. Բրուտյանը և Լ. Հակոբյանը, ինչպես նաև ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Ռ. Գրձեյանը:

10. Կրթական ծրագրի մոնիթորինգի վերաբերյալ ընդհանուր եզրակացությունները հետևյալն են.

1. Տնկուս խմբում անցկացրած հարցման փորձը ցույց է տալիս, որ ուսանողին առաջարկվող հարցերը ընդհանրացված են և հնարավորություն չեն տալիս ձևավորելու ուսանողների կարծիքի քիչ թե շատ օբյեկտիվ պատկեր: Կարծում ենք, որ պետք է հանձնարարել ԵՊՀ համապատասխան մասնագետներին կազմելու հստակ և տրամաբանորեն կառուցված հարցաշար, որը հնարավորություն կընձեռի ստանալու հնարավորինս ճշգրիտ պատկեր՝ ուսանողների կարծիքի վերաբերյալ:

2. Կրթական ծրագրի արդյունավետության առավել ճշգրիտ պատկեր ստանալու համար ցանկալի է նաև իրականացնել ուսանողների ընդհանուր մակարդակի, մոտիվացիայի առկայության, ուսումնառությանն առնչվող անձնային որակների մոնիթորինգ:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝** ռուս բանասիրության ֆակուլտետի դեկան Պ. Բալայանը, ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Լ.Բրուտյանը, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Լ. Մաթևոսյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Դ.Գազարովան:

Ելույթ ունեցողները հայտնեցին իրենց դիտարկումները և եկան այն եզրակացության, որ հաշվետվությունը արտացոլում է ծրագրի իրական վիճակը, հաշվի են առնված հնարավոր վտանգները, նշված են բարելավման ուղղությունները և հնարավորությունները:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել մագիստրատուրայի կրթական ծրագրի մոնիթորինգի արդյունքները, հաշվի առնելով հնչեցրած կարծիքները և համապատասխան ճշգրտումներ կատարելուց հետո:

**6. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:**

Պ.Բալայանը հայտարարեց, որ Ն.Ա. Գոնչարը դարձել է ԵՊՀ Բանբեր-ի գլխավոր խմբագրի տեղակալ, ԵՊՀ Բանբեր-ի Ռուս բանասիրություն սերիայի պատասխանատու խմբագիր է դարձել Լևոն Հակոբյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հայտարարությունը ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ